

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ՂԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ  
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Արմեն ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Ռուս-Հայկական համալսարանի ֆիզ. դաստիարակության ամբիոնի վարիչ  
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Բանալի բառեր. ֆիզիկական դաստիարակություն, կազմակերպում, կառավարում,  
մոդել, համակարգ

Ֆիզիկական դաստիարակության կառավարման մոդելների վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆիզիկական դաստիարակության կառավարման համակարգային ցանցի կառուցումը ենթադրում է մի կողմից կառավարման նոր մոտեցումների, նորարարական լուծումների հաշվառում, մյուս կողմից՝ անձակենտրոն կրթություն, մասնավորապես ֆիզիկական դաստիարակության գրագետ կազմակերպված գործընթաց, ինչպես նաև ֆիզիկական կրթության ազգային յուրահատկությունների վրա հիմնված կրթական բարեփոխում՝ «Բոլոնյան գործընթաց»-ի համատեքստում:

Հետազոտության նպատակը ենթադրում է ուսումնասիրել բուհում ֆիզիկական դաստիարակության համակարգի կազմակերպման արդի առանձնահատկությունները, հիմնավորել և մշակել այդ գործընթացի կառավարման մոդելի տեսամեթոդաբանական հիմքերը:

Միաժամանակ, պետք է ճիշտ մոտեցում ցուցաբերել բուհերի ինքնուրույնության և ինքնավարության հարցերին՝ պահպանել միջազգային միտումների հետ ամբողջացման հիմնախնդիրը, համագործակցել ՀՀ բուհերի, խնդրին քաջատեղյակ և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ու ֆեդերացիաների հետ, կարևորել կամավորական շարժումը սպորտում և ֆիզիկական ակտիվությունում, ապահովել ազգային ակունքների վերածնունդը, չանտեսել արժեքային կողմնորոշումների և ավանդույթների փոխակերպումները (սպառողական հասարակություն), որոնք պայմանավորված են կոնկրետ բուհի մատուցած ծառայությունների մատչելիությամբ:

ՀՀ-ում գործող ԲՈՒՀ-երի ցանկը կարելի է տարանջատել երկու խմբի՝ երևանում և մայրաքաղաքից դուրս գտնվող քաղաքներում գրանցված համալսարաններ և ինստիտուտներ: Վերոհիշյալ բուհերի պաշտոնական կայքերում նավարկելիս (փնտրելիս) բացահայտեցինք յուրօրինակ պատկեր: ՖԿՀՊԻ մասնագիտացված ուսումնական հաստատությունից հետո՝ կարելի է նշել Հայաստանի ազգային ազրարային համալսարան (ՀԱԱՀ) կայքի գլխավոր էջը, որտեղ առկա էր սպորտ և մշակույթ բաժինը: Վերջինս ընդգրկում էր հետևյալ երեք ենթաբաժինները՝ շախմատի թանգարան, ինքնագործ խումբ և սպորտի բաժին: Օրինակ, դիտարկված երրորդ՝ «սպորտի բաժին» ենթա-

բաժնուն և ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում գործող ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի կայք-էջում հիմնականում ներկայացված են համալսարանի և մասնավորապես հիշյալ ամբիոնի սպորտային միջոցառումների և մարզական խմբակների ու ավանդույթների կայացման պատմությունը, իսկ վալեոլոգիայի մասին որևէ տեղեկատվություն առկա չէ [9]:

ՀԱԱՀ-ից և ՖԿՀՊԻ-ից զատ՝ ՀՀ բուհերից ֆիզիկական դաստիարակությանը, առողջ ապրելակերպին և ուսանողական սպորտին կողմնորոշված առավել արդյունավետ որոնողական արդյունքներ բացահայտվեցին նաև ՀՌՀ-ում, առավել մեծ քանակություն առկա էր ՌԴ բուհերում, և դրան գրեթե համարժեք էր մեր կողմից պատահականության սկզբունքով ընտրված բուհերի օրինակը: Այսպիսով, դեպի ֆիզիկական դաստիարակություն և ֆիզիկական ակտիվություն ուսանողների իրազեկվածության և նրանց դրդապատճառների վրա ազդող հետազոտության արդյունքում փաստեցինք հետևյալը:

Հանրապետությունում ուսանողական սպորտի զանգվածայնացման, մեծ թվով ուսանողների ներգրավման, առողջ ապրելակերպի իրազեկման, մրցումների արդյունավետ կազմակերպման ուղղությամբ տարվում են որոշակի աշխատանքներ (ուսումնամարզական միջոցառումներ): Ինչպես Հանրապետական ուսանողական ֆեդերացիան, այնպես էլ առանձին բուհեր յուրաքանչյուր տարվա համար մշակում են մարզական միջոցառումների օրացուցային ծրագրեր: Ելնելով համաշխարհային ուսանողական օլիմպիադաների ծրագրերից և դրանցում ներառված մարզաձևերից, Հանրապետական ուսանողական ֆեդերացիան կազմակերպում և անց է կացնում հանրապետական ուսանողական խաղեր, որտեղ ընդգրկված են ութ մարզաձևեր: Ուսանողների մարզական առօրյան հագեցնելու նպատակով լայնածավալ մարզական միջոցառումներ են ծրագրվում և անցկացվում նաև ՀՌՀ-ում.

- 1) ՀՌՀ գավաթի միջբուհական խաղարկություն,
- 2) ՊՆ հետ բուհի մարզամշակութային միջոցառումների անցկացում,
- 3) Ներբուհական առաջնության անցկացում,
- 4) Աշխատակիցների միջև առաջնությունների անցկացում,
- 5) ՀՌՀ օրվան նվիրված մարզական միջոցառումներ:

Վերը նշված միջոցառումների շրջանակն ընդգրկում է ընդհանուր թվով հինգ մարզաձևեր: Նմանատիպ մարզական միջոցառումներ անց են կացվում նաև հանրապետության այլ բուհերում: Բուհի մարզական առօրյան հագեցնելու, առողջ ապրելակերպը պրոպագանդելու միտումով առաջարկում ենք.

1. Բուհում ավելացնել մարզական միջոցառումների քանակը, դրանցում ընդգրկելով ավելի մեծ թվով ուսանողների:
2. Բուհում բացել կամ ավելացնել մարզական խմբակների քանակը, ելնելով բուհի ընձեռնաց հնարավորություններից:

3. Ամրապնդել հանրապետական ուսանողական ֆեդերացիայում բուհերի մարզական գործընթացը ներկայացնող ուսանողական խորհուրդների միջև կապը:

Վերլուծության ընթացքում ի հայտ են բերվել նաև սպորտում կամավորներին ներգրավելու հայեցակարգի վերաբերյալ հետազոտություններ: Այսպես, կամավորների հոժարական գործունեությունն ունի մասնագիտական ակտիվություն ծավալելու բոլոր նախանշանները, հետևաբար, կամավորների պատրաստությունն անհրաժեշտ է իրականացնել մասնագիտական պատրաստության գիտական ալգորիթմների համապատասխան [7, էջ 57]:

Բազմաթիվ երկրներում կամավորներն ակտիվորեն մասնակցում են սպորտային մրցումների և միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը, դրանով իսկ կատարելով հասարակայնորեն նշանակալից գործունեություն: Սպորտային մրցումներում կամավորական գործունեությանը մասնագիտացված ֆիզիկական դաստիարակության օգնությամբ ուսանողներին նախապատրաստելու հնարավորությունն ունի գործնական նշանակություն և իր մեջ բովանդակում է գիտական նորարարության տարրեր [8, էջ 132]: Այս փաստերը վկայում են այն մասին, որ ուսանողների կամավորական գործառույթը կարելի է օգտագործել նաև ֆիզիկական դաստիարակության կառավարման տարրերը կատարելագործելու համար, քանզի նրանք համագործակցելով ֆեդերացիայի, մասնավորաբար՝ ուսանողական սպորտի ֆեդերացիայի հետ, կարող են նպաստել երիտասարդ ուսանողների ակտիվության բարձրացմանն ընդհանրապես:


Ուսանողների առողջության և առողջ կենսակերպի ձևավորման մոդելները նշակելուց առաջ ուսումնասիրվել է «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ՝ «Բոլոնյան հռչակագրին» միանալու հիմնական դրույթները, ինչպես նաև ուսումնասիրվող խնդրին վերաբերող «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքը, «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության որոշումներն ու կարգադրագրերը: Է. Գ. Բուլիչը առաջարկում է առողջության մոդել, որում ֆիզիկական և շարժողական պատրաստվածությունը, ինչպես և ինտելեկտի, հոգեկանի զարգացման մակարդակը կազմում են առողջության երկու կարևոր բաղադրամասեր [5]: Վերջին տարիներին լայնորեն տարածում ստացած ֆիզիկական վարժություններով լրացուցիչ պարապմունքների ձևը, որը ժողովրդականություն է վայելում ուսանող երիտասարդների շրջանում՝ մարզաառողջարարական վճարովի ծառայություններն են: Իբրև օրինակ, կարող ենք հղում կատարել Ն. Լ. Գուսևին և Վ. Գ. Շիլկոյին [4], ովքեր նշում են, որ հենց այդ նպատակներով ռուսաստանյան համալսարաններից մեկում բացված վճարովի ծառայություններ մատուցող «ֆիզիկական կուլտուրայի և սպորտի

«Универспорт» կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը ֆիզիկական դաստիարակության խնդիրների իրականացումից զատ կարողացել է մարզական-ֆիզկուլտուրային գործունեության միջոցների ապահովման ծանրակշիռ նյութական օժանդակություն ցուցաբերել համալսարանին:

Կարելի է եզրակացնել, որ կառավարման մեջ հարկավոր է կիրառել լոգիստիկ և համակարգային մոտեցման որոշ տարրեր: Տ. Վ. Ալեսինսկայան առաջարկում է լոգիստիկա հասկացության մի քանի տասնյակ բնորոշումներ ինչպես տնտեսական գործունեության, այնպես էլ գիտական կառավարման այլ ճյուղերի համար [3, էջ 34-36]: Լոգիստիկայի առավել լայն մեկնաբանության ներքո հեղինակը հասկանում է տնտեսական համակարգերում գոյություն ունեցող բոլոր տեսակի հոսանքների (նյութական, մարդկային, էներգետիկ, ֆինանսական և այլն) կառավարումը: Ցանկացած օբյեկտի կառավարումը ենթադրում է նախ որոշման ընդունում, ապա դրա իրականացում: Մեր խնդիրներին համապատասխանողն ու առավել գրավիչն այն է, որ լոգիստիկական մոտեցումը թույլ է տալիս ծրագրել, վերահսկել և կառավարել գործընթացները, ինչը որոշ չափով վերաբերում է նաև սպորտի և ֆիզիկական դաստիարակության կառավարման գործընթացին, իսկ տվյալ դեպքում՝ դրա իրականացմանը կրթական միջավայրում:

Վերլուծելով կառավարման և դրա տնտեսական տարրերի հիմնախնդիրներին նվիրված բազմաթիվ, այդ թվում՝ նաև հայրենական տնտեսագետների աշխատանքները [1, 2], մենք հանգեցինք այն եզրահանգմանը, որ լոգիստիկական խնդիրների լուծման և ռացիոնալ մեներջմանի ներդրման անհրաժեշտությունն առաջանում է գրեթե միշտ:

Ռուս մասնագետների կողմից դիտարկվել է բիզնես-գործընթացները նկարագրելիս կիրառվող ավելի բարդ գործիք, որը կոչվում է հորիզոնական նկարագրություն: Այսպես, ըստ Ս. և Վ. Կովալենների՝ կառավարման գործընթացի կառուցման, կազմակերպական նախագծման, գործառնական և ռազմավարական մեթոդների ներդրման հետազոտությունները նախատեսում են լոգիստիկայի տարրերի օգտագործում [6, էջ 26]: Կառավարման գործընթացի իրականացման բաղադրիչների ցանցում ներդրված մոտեցումը և լոգիստիկական կապերի տրամաբանությունը հանդիսանում է ուսանողի ֆիզիկական դաստիարակության համակարգի կառավարման մեր կողմից առաջարկվող մոդելի մշակման հիմքերից մեկը: Այսպիսով, փոխարինելով որոշ բաղադրիչների անվանումները և կապերի ուղղությունները կառուցվեց համակարգային մոդել, որում միավորվեցին գործընթացների ծառի և ցանցի հատկանիշներն ու կապերը (տե՛ս նկար 1):



**Նկար 1.** Ֆիզիկական դաստիարակության կառավարման լոգիստիկական արդյունավետ կապերի վրա հիմնված համալիր բազմագործառական մոդել

Ինչպես երևում է նկ. 1-ից՝ մշակված համակարգային մոդելը ներառում է արտաքին և ներքին ներդաշնակ բազմագործառական կապեր: Ներկայացված հիերարխիկ համակարգի կենտրոնում գտնվում է ուսանողի անձն իր ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկություններով, որոնց համապատասխանությամբ էլ իրականացվում է ֆիզիկական դաստիարակության գործընթացը: Լոգիստիկական ցանցի յուրաքանչյուր բաղադրիչի գուրծառույթի արդյունավետությունը կապված է մոդելում նշված կոնկրետ բաղադրիչի հետ: Այսպես, համալսարանի գործառույթներից մեկը՝ ուսանողի ֆիզիկական և հոգեբանական ներդաշնակ զարգացման ապահովումն է, որն անմիջական կապ ունի բուհի ֆիզիկական դաստիարակության հետ, իսկ վերջինս, իր հերթին, կապված է ֆիզիկական դաստիարակության նպատակահարմար ձևերի հետ, որոնց ներդրման համար անմիջական պատասխանատվություն է կրում ֆիզիկական դաստիարակության ամբիոնը: Այսպիսով, ֆիզիկական դաստիարակության կառավարման լոգիստիկական արդյունավետ կապերի վրա հիմնված համալիր բազմագործառական մոդելն իր մեջ բովանդակեց և շեշտադրեց սերունդների (մանկապարտեզի սան, աշակերտ, ուսանող), ազգային և մշակութային ավանդույթների (մշակութային տարրերի ընդգրկմամբ ազգային շարժախաղեր), ընտանիքի, մակրոմիջավայրի հաստատությունների (ինստիտուտներ և համալսարաններ), միկրոմիջավայրի ենթակառուց-

վածքների ու ենթաբաժինների (մասնագիտացված ֆակուլտետներ և ամբիոններ), ֆիզիկական զբաղվածության պարտադիր և կամավոր ձևերի (ակադեմիական պարապմունքներ, մարզական ակումբներ, սիրողական սպորտային խմբեր), տեսական (ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա, առողջ կենսակերպ և վալեոլոգիա) և գործնական (ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներ) դասընթացների միջև դրսևորվող արտաքին և ներքին համաչափ կապեր: Հիշյալ բոլոր կապերի բովանդակությունը դիտարկվել և վերլուծվել են կատարված տեսական և փորձարարական հետազոտություններում: Ենթադրվում է, որ ֆիզիկական կուլտուրայի և մարզական ակտիվության արժեքների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը և այդ գործընթացում ներգրավվածության աստիճանը պայմանավորված է կառավարման ուղղորդված բազմագործառական համակարգով, որը հիմնված է ներքին և արտաքին համաչափ կապերի (լոգիստիկական) վրա և գործում է բուհի ինքնավարության համատեքստում: Այդ առումով արդյունավետ կառավարումը ենթադրում է վերաբերմունքի և ժամանակի արժեքների, գիտելիքների արժեքների, պայմանների արժեքների, ազգային ավանդույթների և դրվածքի հետ կապված արժեքների համալիր դիտարկումը: Ժամանակակից բուհի ֆիզկուլտուրային կրթության և դաստիարակության կառավարման գործընթացի գիտամանկավարժական հիմնավորումը հանդիսանում է նորագույն կերտվածքի մասնագետների պատրաստությանն օժանդակող, տարբեր բնագավառներում մասնագիտական գործունեությանը պատրաստ ուսանողի անձի ֆիզիկական կուլտուրայի ձևավորումը:

#### **ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Ղանթարջյան Ս. Լ. Մասնագիտության արդիական հիմնախնդիրները (Ինովացիոն կառավարում): Ուսումնական ձեռնարկ, Եր.: ԵՊՀ հրատ., 2014, 152 էջ:
2. Սուվարյան Յու. Մ. Մենեջմենթ, Եր.: Տնտեսագետ, 2009, 607 էջ:
3. Алесинская Т. В. Основы логистики. Общие вопросы логистического управления. Таганрог: Изд-во ТРТУ, 2005. - 121с.
4. Гусева Н. Л., Шилько В. Г. Физкультурно-спортивная деятельность в вузе как средство приобщения студентов к здоровому образу жизни / Физическая культура, здравоохранение и образование // <https://refdb.ru/look/2313026-pall.html>
5. Капитанов С., Кабачкова А. Уровень физического развития и физической подготовки студентов, Физкультура и образование // <https://refdb.ru/look/2313026-pall.html>
6. Ковалев С. М., Ковалев В. М. Описание бизнес-процессов к вершинам мастерства // Журнал "Консультант директора", № 10, 2004, с. 25-26.
7. Кружков Д., Коренева М. Концепция привлечения волонтеров для обслуживания Олимп. и Паралимп. игр по направлению «Сервис», Физкультура, 2012, № 2.
8. Осипов А., Белов А., Кадомцева Е., Подготовка студентов к волонтерской деятельности на спорт. мероприятиях с помощью физ. воспитания, Вестник КГПУ, № 1, 2015.
9. <http://anau.am/hy/study-prosecc/2011-07-06-08-15-25/212-2011-07-31-12-34-39>

### **Արմեն ԳՐԻԳՈՐՅԱՆ**

#### **Բուհում ֆիզիկական դաստիարակության կառավարման գործընթացի համակարգային կազմակերպման փորձի վերլուծություն**

*Բանալի բառեր.* ֆիզիկական դաստիարակություն, կազմակերպում, կառավարում, մոդել, համակարգ

Ֆիզիկական դաստիարակության կառավարման մոդելների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ գործընթացի կառավարման համակարգային ցանցի կառուցումը ենթադրում է մի կողմից կառավարման նոր մոտեցումների, նորարարական լուծումների հաշվառում և դրանց համադրում բուհի ուսումնական գործընթացի ամբողջ տրամաբանության հետ: Հետազոտության նպատակը ենթադրում է ուսումնասիրել բուհում ֆիզիկական դաստիարակության համակարգի կազմակերպման արդի առանձնահատկությունները, հիմնավորել և մշակել այդ գործընթացի կառավարման մոդելի տեսանկյունային հիմքերը: Աշխատանքում ամփոփված է բուհական ֆիզիկական դաստիարակության կառավարման գործընթացի համակարգային կազմակերպման յուրօրինակ փորձը:

### **Армен ГРИГОРЯН**

#### **Анализ опыта системной организации процесса управления физическим воспитанием в вузе**

*Ключевые слова:* физическое воспитание, организация, управление, модель, система

Анализ различных моделей управления и организации процесса физического воспитания студентов предполагает внедрение современных подходов и методов решения управленческих задач. Цель работы заключалась в исследовании современных особенностей организации процесса физического воспитания в вузе и разработке теоретико-методологических основ модели его управления. Представлен оригинальный опыт системной организации процесса управления физическим воспитанием в вузе.

### **Armen GRIGORYAN**

#### **Analysis of the experience of the system of management of physical education in high school**

*Key words:* physical education, organization, management, model, system

Analysis of various models of management and organization of the process of physical education of students involves the introduction of modern approaches and methods for solving management problems. The aim of the work was to study modern features of the organization of the physical education process in the university and to develop the theoretical and methodological foundations of the model of its management. The original experience of the system organization of the physical education management process in the university is presented.